բապատ խիտ անտառների մէջ, իրարից 50 վերստ հեռի. Քիլվարը՝ սարերի վրայ Ղուբայից դէպի հարաւ, իսկ Խաչմասը դաշտի վերայ դէպի ծովը հարաւ։

Քիլվարի եկեղեցին շինուած է 1637 Փրկչական թուին, այն հին մատուռի հիմունքների վրայ, որ ասում են աւանդութեամբ սուրբ Գրիգորիսի հիմնարկածն և օծածն է։

Եկեղեցւոյ շինութեան արձանագրութիւնը, գուցէ թէ վերանորոգութեանը լինի, հետեւեալն է հարաւային որման վրայ.

«Շինեցաւ սուրբ եկեղեցիս ի ժամանակն եւ ի Հայրապետութեան Թումայ վարդապետի թվին ՌՁՁ.ին (1637) ձեռամբ ուստայ Կիրակոսի»։

Կայ և մի արձանագիր եկեղեցւոյ դրան ճակատին ըստ այսմ. —

«Շինեցաւ եկեղեցիս տրօք ժողովրդոց հոգաբարձութեամբ Անտոն վարդապետին, Տէր Պողոսին, Տէր Արիստակէսին, Տէր Ղազարին, որք հանդիպիք յիշեցէք յաղօթս ի Տէր թվին ՌՃԼԴ ին (1684)»։

Այս եկեղեցին ժողովուրդը 1885 թուից նորոգելով և հաստիւ 1890 թուին պատրաստելով օծուեց Մակար վարդապետ Բարխուդարեանցի ձեռօքն, որին մենք ուղարկեցինք ժողովրդեան այցելութեան և եկեղեցւոյն օծման համար։

Քիլվարցիք այնքան նման են մատրասեցւոց լեզուով, սովորութիւններով և ամենայն բանով, որ կարծես ազգականք և բարեկամք լինին միմեանց. ուստի և այնքան հեռաւորութեան վրայ՝ Մատրասից մինչեւ Քիլվար՝ 3 օրուայ ճանապարհ քարվանի, աղջիկ տալով և առնելով խնամութիւն են անում։

Քիլվարցիք անխոնջ հոգատարութեամբ մեր ազնիւ բարեկամ պարոն Ներսիսի Տէր Անդրէասեան Սարումեանցի յատկացրին իրենց եկեղեցական դպրոցին մշտնջենաւոր ապահովութեան համար 350 օրավար վարելահող «Խանլրի – Օրայ» անունով՝ հանդերձ այն հողին պատկանեալ դրովն. և այս հողը տրուած է կապալաւ ի տարին 250 ռուբլւոյ, և ըստ այսմ 1893 թուից բացաւ դպրոցը։